Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ և Թամար Մանուկյան Մատենադարան»-ի 2015 թվականի գործունեության վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին Ս. Էջմիածնի Մատենադարանի աշխատակազմը համալրվեց վեց նոր աշխատակցով:

Մատենադարանի 2015 թվականի աշխատանքային գործընթացն ընդգրկում է երեք հիմանական ոլորտ՝ գրադարանային գործունեություն, գիտական գործունեություն և թանգարանային գործունեություն:

ա) Մատենադարանի գրադարանային գործունեություն

Ինչպես նախորդ տարիներում, հաշվետու ժամանակահատվածում Մատենադարանի գրադարանային ոլորտի աշխատանքները հիմնականում ուղղված են եղել գրականության ձեռքբերմանը, գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, համակարգված և հեղինակային քարտարանների ստեղծմանը: Կազմվում են ստացված գրքերի ցուցակները, կատարվում՝ գրքերի վերստուգում: Համագործակցելով մի շարք կազմակերպությունների, անհատների և նվիրատուների հետ՝ 2015 թվականի ձեռք բերված գրքերի ընդհանուր քանակը կազմում է 1243 միավոր գրականություն:

Մատենագիտական բաժնում շարունակվում են աշխատանքները «Աստվածաշնչային ընկերության», Տ. Շահե Արք. Աճեմյանի, Տ. Հուսիկ արք. Սանթուրյանի, Զավեն Գրիգորյանի նվիրած գրքերի մշակման աշխատանքները:
2015 թ. ընթացքում ընթերցողների թիվն ավելացել է շուրջ ինը տասնյակով:

բ) Գիտական գործունեություն

Ընթացիկ աշխատանքներին զուգահեռ կատարվում են գրքերի նախնական թվայնացման աշխատանքներ: Անցնող տարում ձեռք են բերվել մի շարք գրքերի թվային տարբերակները. պատվիրվող գրքերի մի մասը ընթերցողներին սպասարկվել է թվայնացված տեսքով:

2015 թ Մատենադարանի ողջ անձնակազմն իր ջանքերն է ներդրել Մայր Աթոռում տեղի ունեցած Ցեղասպանության 100-ամյակի և Ս. Մյուռոնի օրհնության առիթներով տեղի ունեցած միջոցառումներին: Անցնող տարում Մատենադարանի

սրահներում անցկացվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի մի շարք հանդիպումներ հյուրերի հետ, ինպես նաև գիտաժողովներ՝ կազմակերպած Մայր Աթոռի տարբեր բաժինների կողմից, որոնց ժամանակ Մատենադարանն իր ողջ կազմով ոչ միայն մասնակցել, այլև օգնել է նախաձեռնած աշխատանքներին:

գ) Թանգարանային գործունեություն

2015 թ. դեկտեմբերին ստացավ իր ցուցապահարանների մի մասը: Առաջիկայում, ըստ հաստատված նախագծի, թանգարանը ցուցադրության համար ունենալու է երեք սրահ՝ «Գիրքը Սուրբ Էջմիածնում», «Հայ հնատիպ գիրքը» և «Թեմատիկ փոփոխվող ցուցադրություն»: